Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 7

2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 9-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՓՄՁ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԵՆԹԱԽՈՐՀՐԴԻ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ԿԱԶՄՈՎ ՆԻՍՏԻ

քաղաք Երևան

Մասնակցում էին՝

Ռաֆայել Գևորգյան	Էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Անդրանիկ Ալեքսանյան	ՀՀ առևտրաարդյունաբերական պալատ
Էդուարդ Բաղալյան	«Քաղաքացի-հարկատու-բիզնես» իրավապաշտպան կազմակերպության փոխնախագահ
Ռուբեն Օսիպյան	«ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ի գործադիր տնօրեն
Արմինե Դավթյան	Ամերիկայի առևտրի պալատ
Լուսինե Մնացականյան	Coca-Cola HBC
Լուսինե Սարգսյան	Երևանում Բրիտանական դեսպանատան տնտեսական խորհրդատու
Կարեն Մարտիրոսյան	Էքսպորտ Արմենիա
Աննա Բեկլյառովա	Էքսպորտ Արմենիա
Գևորգ Պողոսյան	Գործարարության աջակցման գրասենյակի ղեկավար
Դավիթ Աղաջանյան	Գործարարության աջակցման գրասենյակի փորձագետ
Իզաբելա Հովհաննիսյան	Գործարարության աջակցման գրասենյակի փորձագետ
Դիանա Հարությունյան	Գործարարության աջակցման գրասենյակի փորձագետ
Հռիփսիմե Հովհաննիսյան	Էկոնոմիկայի նախարարության ձեռներեցության զարգացման վարչության գլխավոր մասնագետ
Սուսաննա Ենոքյան	Էկոնոմիկայի նախարարության ձեռներեցության զարգացման վարչության գլխավոր մասնագետ
Գոհար Գրիգորյան	Էկոնոմիկայի նախարարության ձեռներեցության զարգացման վարչության առաջատար մասնագետ

Նիստի բացմանը ողջույնի խոսքով հանդես եկավ Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ռաֆայել Գևորգյանը:

Նիստի ընթացքում քննարկվեցին՝

ՀԱՐՑ 1. ՆԱԽՈՐԴ ՆԻՍՏԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Նիստի ընթացքում ամփոփվեցին ենթախորհրդի նախորդ նիստերում քննարկման առաջարկված և հանձնարարականների մասով կատարված աշխատանքները: Մասնավորապես՝ առևտրային ցանցերի կողմից վճարման ժամկետների կարգավորման, ֆակտորինգի կիրառման հնարավորություններն ընդլայնելու, Հայաստանում բիզնես օմբուդսմենի ինստիտուտի ներդրման, «Վայլդբերիզ» առևտրի հարթակում ներկայացվածության խնդիրների և աշխատանքային խմբի ձևավորման վերաբերյալ հարցերը:

Քննարկումների արդյունքում որոշվեց՝

Առևտրային ցանցերի կողմից վճարման ժամկետների կարգավորման հարցի վերաբերյալ.

1)Նախարարության համապատասխան ստորաբաժանմանը՝ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի ներկայացուցիչների հետ համատեղ կազմակերպել քննարկում առևտրային ցանցերի կողմից վճարման ժամկետների կարգավորման խնդրի լուծման վերաբերյալ:

2) Գործարարության աջակցման գրասենյակին՝ ուսումնասիրել առևտրային ցանցերի կողմից վճարման ժամկետների խնդրի կարգավորման համար ֆակտորինգի կիրառման հնարավորությունը՝ միջազգային փորձի համատեքստում:

Հայաստանում բիզնես օմբուդսմենի ինստիտուտի ներդրման հարցի վերաբերյալ կազմակերպել քննարկում Էկոնոմիկայի նախարարությունում՝ ներգրավելով նաև Արդարադատության նախարարության և Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչներին:

Գործարարության աջակցման գրասենյակին՝ ներկայացնել առաջարկ ֆակտորինգի կիրառման հնարավորությունների վերաբերյալ:

Ցուցահանդեսային ապրանքների ժամանակավոր արտահանման (ATA Carnet) և երկրի ծագման սերտիֆիկատի տրամադրման ընթացակարգի վերաբերյալ հարցերի մասով կազմակերպել քննարկում Էկոնոմիկայի նախարարությունում՝ Արդյունաբերության զարգացման վարչության պետ Արմեն Եգանյանի մասնակցությամբ:

ՀԱՐՑ 2. ԱՆԿԱՆԽԻԿ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԽՆԴՐԱՀԱՐՈՒՅՑ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Դավիթ Աղաջանյանի ներկայացմամբ քննարկվեց «Անկանխիկ գործառնությունների մասին» օրենքի նախագիծը, ներկայացվեցին նախագծի վերաբերյալ որոշ դիտարկումներ և առաջարկություններ:

Քննարկումների արդյունքում որոշվեց՝

Գործարարության աջակցման գրասենյակին՝ վերհանել նախագծից բխող բոլոր խնդիրները և առաջարկությունների տեսքով ներկայացնել նախարարություն:

ՀԱՐՑ 3. ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲԻԶՆԵՍԻ ԳՐԱՆՑՄԱՆԸ ԶՈՒԳԱՀԵՌ ՆԱԵՎ ՀԱՐԿՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՄ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆՇՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԻՐԱՎԱՉԱՓՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԱՌԱՋԱՑՐԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՈՒ ՀՆԱՐԱՎՈՐ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Դավիթ Աղաջանյանը ներկայացրեց Պետական ռեգիստրի գործակալությունում բիզնեսի գրանցմանը զուգահեռ նաև հարկման հիմնական կամ այլընտրանքային համակարգի ընտրության վերաբերյալ նշում կատարելու իրավաչափությունը, դրանից բխող խնդիրները, ինչպես նաև հարցի հնարավոր լուծումները: Առաջարկվեց հանել Պետական ռեգիստրի գործակալությունում բիզնեսի գրանցման ժամանակ հարկման հիմնական կամ այլընտրանքային համակարգի ընտրության կարգավորումը:

Քննարկումների արդյունքում որոշվեց՝

Գործարարության աջակցման գրասենյակին՝ ներկայացնել վերոնշյալ հարցի վերաբերյալ համապատասխան օրենքում փոփոխություն կատարելու մասին նախագիծ:

ՀԱՐՑ 4. ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՏՎԱՍՏՄԱՆ ԿԱՄ ԹԵՍԹԱՎՈՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԻՑ ԲԽՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԵՎ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Լուսինե Մնացականյանի ներկայացմամբ քննարկվեցին աշխատողների պարտադիր պատվաստման կամ թեստավորման պահանջից բխող իրավական խնդիրները, մասնավորապես՝ Առողջապահության նախարարի հրամանով նման բարդության հասարակական հարաբերություն կարգավորելու ոչ իրավաչափ լինելը և օրենքի մակարդակով ամրագրում անելու անհրաժեշտությունը: Առաջարկվեց աշխատողների պարտադիր պատվաստման կամ թեստավորման պահանջի մասին Առողջապահության նախարարի հրամանով ամրագրված սահմանափակումները սահմանվեն Կառավարության որոշմամբ:

Քննարկումների արդյունքում որոշվեց՝

Աշխատողների պարտադիր պատվաստման կամ թեստավորման պահանջից բխող իրավական խնդիրների մասին հարցը ներառել ՓՄՁ զարգացման խորհրդի ենթախորհրդի

հաջորդ նիստի օրակարգում՝ հրավիրելով նաև Առողջապահության նախարարության և համապատասխան տեսչական մարմնի ներկայացուցիչներին:

ՀԱՐՑ 5. ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՊԵԿ-Ի ԿՈՂՄԻՑ ՇՐՋԱՆԱՌՎՈՂ ՄԻ ՇԱՐՔ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԽՆԴՐԱՀԱՐՈՒՅՑ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Էդուարդ Բադալյանի ներկայացմամբ քննարկվեցին հարկային ստուգումների՝ համալիր և թեմատիկ, ՀԴՄ-ների տրամադրման, ՀԴՄ չտրամադրելու դիմաց տուգանքների տարբերակված մեխանիզմի կիրառման հնարավորությունների, հսկիչ գնումների իրականացման, էլեկտրոնային ծանուցումների միասնական համակարգի ներդրման, եկամտային հարկի հաշվառման փոփոխության վերաբերյալ խնդիրները, ներկայացվեցին նաև դրանց մասին դիտարկումներ:

Քննարկումների արդյունքում որոշվեց՝

Պետական եկամուտների կոմիտեի կողմից շրջանառվող մի շարք օրենքների նախագծերի վերաբերյալ մանրամասն քննարկում կազմակերպել նախարարի տեղակալ Ռաֆայել Գևորգյանի մոտ՝ հրավիրելով ՓՄՁ զարգացման խորհրդի ենթախորհրդի անդամներին և Պետական եկամուտների կոմիտեի ներկայացուցիչներին:

ՀԱՐՑ 6. ՓՄՁ ԵՆԹԱԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Դավիթ Աղաջանյանը ներկայացրեց ՓՄՁ զարգացման խորհրդի աշխատակարգում փոփոխություն կատարելու անհրաժեշտությունը՝ բարձրաձայնած խնդիրների լուծման համար առավել գործուն մեխանիզմներ մշակելու նպատակով:

Քննարկումների արդյունքում որոշվեց՝

ՓՄՁ զարգացման խորհրդի նոր աշխատակարգը քննարկել պետություն մասնավոր հատված երկխոսության նոր աշխատակարգի մշակման շրջանակում:

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ
(ԵՆԹԱԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ)

Վ.ՔԵՐՈԲՅԱՆ